## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2016թ. հուլիսի 25-ին, թիվ 92-Ա**

**ք.Աշտարակ**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի <<բ>> և 1.19 կետի <<ա>> ենթակետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 725 -Ն որոշումը,

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> հանրապետական մրցույթին Արագածոտնի մարզի մասնակցությունը ապահովելու նպատակով <<Ուրան Տեքս>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը հատկացնել 996000 (ինը հարյուր իննսունվեց հազար) դրամ գումարով և << Ա.Աղամալյան >> անհատ ձեռներեցին 204000 (երկու հարյուր չորս հազար) դրամ գումարով և սահմանված կարգով կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Գ. ԳՅՈԶԱԼՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2016թ. հուլիսի 25-ի N 92-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի հանրապետական փուլի կազմակերպման և անցկացման

| Հ/Հ | Ծախսերիանվանումը | Քանակը | Գումարը/ՀՀ.դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Մարզահագուստների համար նախատեսված ծախսեր | 40 | 996000 |
| 2 | մարզակոշիկների համար նախատեսված ծախսեր | 40 | 204000 |
| | Ընդամենը | | 1.200.000 |